# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024թ. թիվ 366-Ա

Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ Ռ.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի և 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Գ.Մելիքսեթյանի 28.06.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանին և տեղակալի օգնական Ռուբեն Սահակյանին ս/թ հունիսի 30-ին մեկ օրով գործուղել Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակի կառավարման որոշ աշխատանքների իրականացման և համակարգման համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝ Հովհաննես Ավետիսյանի և Ռուբեն Սահակյանի ամենամյա արձակուրդին ավելացնել մեկ օր:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/06/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հունիսի 28
ք.Վանաձոր